600.0386.06.09.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 սեպտեմբերի 2017 թվականի №386Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N375Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի նոյեմբերի 4-ի N375Ա որոշման 2-րդ կետով հաստատված ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվության (այսուհետ՝ Թույլտվություն) պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավոր է մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը ապահովել Հայաստանի Հանրապետության միջպետական մայրուղիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 85 տոկոսում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ՝ ներառելով Սևան, Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիջան քաղաքների տարածքները, Երևան քաղաքը Դիլիջան, Ծաղկաձոր և Սևան քաղաքներին միացնող մայրուղիներն ամբողջությամբ, ինչպես նաև Երևան քաղաքը Ջերմուկ քաղաքին միացնող մայրուղու 95 տոկոսը,

բ) ի պատասխան Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 3-ի ՈԱԲ-1752Հ գրության՝ Ընկերությունը 2017 թվականի հուլիսի 14-ի N2142 գրությամբ հայտնել է վերը նշված պարտավորության ոչ ամբողջությամբ կատարման մասին (ծածկույթով ապահովված է Հայաստանի Հանրապետության բնակավայրերի 65%-ը), որը պայմանավորված է ներդրումային ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների ուշացման, կայանների կառուցման համար անհրաժեշտ հողատարածքների ձեռքբերման, հատկացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից

հողատարածքների նպատակային նշանակության վերափոխման, վարձակալության իրավունքների ձևակերպման և գործող պայմանագրերի հիման վրա բազմաբնակարան բնակելի շենքերում օգտագործման իրավունքով հատկացված տարածքներ մուտք գործելու հետ կապված խնդիրներով, և խնդրել է Թույլտվությամբ սահմանված պարտավորության կատարման ժամկետ սահմանել մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը,

գ) Հանձնաժողովը 2017 թվականի հուլիսի 27-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 27-ի ՈԱԲ-1965Հ գրությամբ,

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում 2017 թվականի օգոստոսի 14-ի N2274 գրությամբ Ընկերությունը ներկայացրել է իր 2017 թվականի հուլիսի 14-ի N2142 գրությամբ նշված փաստարկների, ինչպես նաև պարտավորությունների կատարման համար հայցվող նոր ժամկետի իրականացումն ապահովող հիմնավորումները և նշել, որ ցանցի կառուցումը հետզհետե բարդանում է բնակավայրերի նոսրացմանը զուգահեռ՝ ենթակառուցվածքների էլեկտրասնուցման աղբյուրների և տվյալների փոխանցման հիմնական կապուղիների դժվար հասանելիության պատճառով, որոնցով պայմանավորված՝ յուրաքանչյուր նոր բազային կայանի կառուցման ծախսերը գրեթե կրկնապատկվում են, իսկ եղանակային պայմաններով պայմանավոված՝ դեկտեմբեր-մարտ ամիսների ընթացքում շինմոնտաժային աշխատանքները չեն կարող իրականացվել ողջ ծավալով: Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ իր զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում նախատեսում է քննարկել Թույլտվությամբ ամրագրված պարտավորությունից բացի նշված ժամկետում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի աշխարհագրության հետագա ընդլայնման հարցերը,

ե) Հանձնաժողովում 2017 թվականի օգոստոսի 22-ին տեղի է ունեցած քննարկման արդյունքում Ընկերությունից պահանջվել է ներկայացնել Թույլտվությամբ սահմանված պարտավորությունից բացի լրացուցիչ 3 տոկոս ծածկույթով ապահովելու վերաբերյալ տեղեկատվություն, որը պետք է ներառի համապատասխան բնակավայրերի ցանկը և նախատեսվող ներդրումների չափի և աշխատանքների ծավալի վերաբերյալ տեղեկություններ, ինչով պայմանավորված՝ 2017 թվականի օգոստոսի 28-ից 10-օրյա ժամկետով երկարաձգվել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի

ժամկետը, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 23-ի ՆԱԲ-2234Հ գրությամբ,

զ) Ընկերությունը 2017 թվականի օգոստոսի 29-ի N2329 գրությամբ հայտնել է, որ Թույլտվությամբ ամրագրված պարտավորությունից բացի լրացուցիչ 3 տոկոս ծածկույթով ապահովելու համար կկառուցվի 8 նոր և կլրակազմվեն 24 գոյություն ունեցող բջջային կայաններ. Ընկերության գնահատմամբ նախատեսվում է իրականացնել մեկ միլիարդ երեք հարյուր երեսուն միլիոն դրամից մինչև մեկ միլիարդ հինգ հարյուր քսան միլիոն դրամի չափով ներդրում, ինչպես նաև ներկայացվել է 4G բացօթյա ծածկույթով ապահովման ենթակա լրացուցիչ 30 բնակավայրերի ցանկը,

է) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը չի կատարել Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը, որի դեպքում Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում փոփոխություն կատարել Թույլտվության պայմաններում՝ պարտավորեցնել Ընկերությանը Հայաստանի Հանրապետության միջպետական մայրուղիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 85 փոխարեն լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթով ապահովել Հայաստանի Հանրապետության միջպետական մայրուղիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակավայրերի առնվազն 88 տոկոսը և երկարաձգել Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ժամկետը մինչև 2018 թվականի ապրիլի 30-ը և,

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետում «2017 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «2018 թվականի ապրիլի 30-ը» բառերով, իսկ «85» թիվը՝ «88» թվով:
2. Ընկերությանը՝
   1) մինչև 2017 թվականի հոկտեմբերի 2-ը Հանձնաժողով ներկայացնել Թույլտվության պայմանների 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պարտավորության կատարումն ապահովող միջոցառումների ծրագիր.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված միջոցառումների ծրագրի ներկայացմանը հաջորդող մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը Հանձնաժողով ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ — Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
6 սեպտեմբերի 2017թ.
ժամը 16[00]